

կամ միւսոյն պատկանելու: Այն խորհրդաւոր որ ստէպ մեծամեծ տէրութեանց սահմանները ընդլայնած է՝ գրաւելով իրեն քովի փոքրիկ իշխանութիւնները, այն խորհրդաւոր զօրութիւնն՝ որ զազգութիւնն ձեւացուցեր է, քաղաքներն և գաւառներն ըստ քաղաքագիտական վարչութեան միացուցեր է, կը սպառնար նաեւ Մէյի ազատութեան: Վերջապէս Հենրիկոս Բէ նրաւ միտ քաղաքագիտութիւնն յաջողեցաւ փրանկիսկեայ Գուելդայի քաջութեամբ, զՄէյ վիճակ մը դարձնել գաղղիական պետութեան: Հնոյն Աւստրալիական տէրութեան մայրաքաղաքն, այն սահաւոր քաղաքն՝ որ Լորենի դքսերուն գիշերային յարձակումները կորազուխ ըրաւ և կարողոս Է և Է՛ արշաւանաց դէմ կեցաւ՝ Մոզելլայի գլխաւոր վիճակ մի եղաւ, և հետեւաբար Գաղղիոյ արևելեան հիւսիսային կողման ամենամուր մարտկոցներէն մին: Բայց 1870 իրեն տարաբախտ տարին հասաւ, և Մէյ գաղղիական ընտիր զօրականայ խորտակումը տեսնելէն ետքը, իրեն վրայ տէր եղող թշնամոյն անձնատուր եղաւ: — Հոս ամենանոր պատմութեան

մը տխուր էջ մը յիշելէն տւելի՝ լռելը լաւ կը համարինք:

Մէյ թէպէտ և քաղաքի մը կերպարանք չ'ընծայելի՝ իրեն ամբողջութիւնը մէկտեղ առնելով, սակայն ունի գեղեցիկ գեղեցիկ շէնքեր, լայն և մաքուր ճամբաներ և բնդարձակ հրապարակներ: Յիշատակութեան արժանի գլխաւոր շինուածներն են՝ քաղաքպետին պալատն, յարկածածկոյթ մեծ վաճառանոցն, և ասոնցմէ աւելի հըռչակաւոր Մայր եկեղեցին, որոյ շինութիւնն մետասաներորդ դարէն սկսեալ տեւեց ցլիշտասաներորդ դար:

Պետրոս Պերրա չորեքտասաներորդ դարուն մէջ այս շէնքիս յատակագիծը տուաւ, բայց իր շինութեան գլխաւոր դարերն եղան 1214, 1383, 1478, 1497 և 1519. — Երեք կամարակապ թեկերէ կը ձևանայ եկեղեցին, միջոյն լայնութիւնն 16 մէզր, իսկ բարձրութիւնն 43 մէզր: Այս մեծագործ շէնքըն, որոյ պատկերը կը ներկայացընեմք 'ի Հանդիսիս, իրեն վայելուչ և գեղեցիկ տեսքովն: Մին 'ի սքանչելեաց ճարտարապետական արուեստի կրնայ համարուիլ:

ՀԱՏՈՒՄՆ ԲԱՆԱՄԱՅԻ ՊԱՐԱՆՈՅԻՆ

(Տէս Հատոր ԽԲ. էջ 357):

Ջրանցից միջին ուղղութիւնն պիտի ըլլայ 'ի հիւսիսային արևմտից դէպ 'ի հարաւային արևելս, գրեթէ երկու հազարամէզը և կէս հալուսն ունենալով, և 75 հազարամէզը երկայնութիւն՝ Քոյանի Ռատայի գետաբերնէն մինչև Փէրիքայ և Մլումէնքոյ կողմ: Մնտեան լեռանց շղթաներէն սկսեալ, (որոնք պարանոցին քովերը ըլլային և տեղ տեղ ալ զաշտային և ճախճախուտ կերպարանք ունին, որով և ողոյ ապականութեան պատճառք են), շատ գետեր վար կը հոսին, յորոց գլխաւորներն են Անդիլեան ծովը թափող Շակըր գետն, և Մեծն Ռիոյ, որ Բանամայի ծոցը կը թափի, որոնց ընթացքն յրանցքին ուղղութեան համար շատ կ'օգտեն: Թէպէտ և ջրաբախական մեծամեծ գործառնութեանց կարօտ ըլլալով: Այս կերպ

պով ջրանցքն Քոյոնէն սկսելով Շակրի գետին ընթացից կը հետևի քիչ շատ մինչև Ուպիտոյ, և ապա Մեծն Ռիոյի ընթացքը բռնելով՝ Խաղաղականին մէջ կը վերջանայ:

Իսկ ջրանցից խորութիւնն ամէն տեղ 9 մեզր պիտի ըլլայ, լայնութիւնն 23 մեզր, և հողերուն քնութեան համեմատ եզերաց զառիկայութիւնն ալ կերպարանաւորութիւն կը կրէ՝ զոր օրինակ. ժայռային հողերու վրայ 4 մեզր և մէկ քառորդ (բարձրութիւնն 4 և խորիս խորն 1 քառորդ մեզրի), իսկ կաւային հողերու վրայ 1 մեզր ու մէկ կամ երկու քառորդ մեզրի: — Աշխատութիւնը չորս մեծ բաժանումն ունին տեղւոյ, և են. Քոյոն-Պոնիոյ Սոյտատոյ, Պոնիոյ Սոյտատոյ — Սոյտ Պոյոս, Սոյտ Պոյոս — Էմբիքատոյ, Էմբիքատոյ — Բա

նախա. որոնք 12 ուրիշ ստորարածածանմունք ունին, և են. ֆոլոն, կաթուն, Պոնիոյ-Սլոտա, տոյ, Թապէրնիլա, Սուրբ Պօղոս, Կորկոնա, Ուլիսիոյ, Էմբէրատոր, Քուէւպրա, Մեծն Ռիոյ, Փարսիլոյ, Բաննաւոն:

Քոլոնի գիծն կամ Սիփիւնոյ կոչուածն՝ գլխաւորներէն մէկն է, զոր երկաթուղեաց Բա նամայի ընկերութիւն մը շինեց 1850ին, իսկ միւս անունն ալ նոյն շինութեան ուղղիչ և կառավոր բազմաշարուտ անձին Սիփիւնոյի անունէն առած է: Մանցանիլոյ կողմէն ճախ ճախուտ և բուստարեր հողոյն վրայ շինուած է, և շահաւոր վաճառականութեան կեդրոն մը, սակայն փտտաւոր և փտանգաւոր՝ սաստկաշունչ հողմոց պատճառաւ, մասնաւոր լաւ բուսան վերջի երկու ամիսները, յորս ծովն այնպէս կը մղոգնի՝ որ բռնութեանը դիմանալու ապաւէն չունեցող նաւերը յափտն կը ձգէ: Այսպիսի դրանգի մը և դժուարութեանց համար որոշեցին որ ձգեն գոյն, և գետային նաւահանգիստ մը շինեն՝ ի Եակըր, իններորդ ու տասներորդ հազարամետրի մէջ, ուր Լէսաէփա ըտանձ քաղաքն սկսան հիմնել. բայց հոն ալ գործառնութիւն փոխադրական ու վնասակար տենդէ բռնուելով՝ շատերն մեռան, ու մնացողներն ալ ահաբեկք և հիւանդագին՝ աշխատութիւնը թողուցին, և պէտք եղաւ որ նորէն ի Քոլոն դառնան, ուր հիմայ մեծամեծ գործերու ձեռք զարկած է ընկերութիւնն: Քոլոնի կէտն դարձեալ նշանաւորներէն մին համարուած է, որովհետև ջրանցից մոխրը վրայ շինուած է, ինչպէս նաև երկաթուղուն գծին սկզբնաւորութիւնն է, որով ամենայն կարելոյ, մեքենայաբար, կառք, անիւք դուրս և ատենին կը հասնին. նաւերու ապաւէն մեծ նաւահանգիստ մը պիտի շինեն, որոնք ի ջրանցից անցնելու համար պիտի սպասեն իրենց կարգին: Քէննէյա Պուֆէն եկած քարերով կը շինուի ամբարտակ մը իբր ապաստանարան, որ իմակուան եղած փարոսէն առաջ պիտի երթայ մինչև ի հիւսիսային-արևելոյ: Ամբարտակն շինութեան համար, որ ընդարձակ տեղ մը պիտի պաշտպանէ, 800000 խորանարդ մեդր հող և քար բերուեցաւ՝ հարթելով Մոնթէ Զիլ բլուրն ալ, և հոն հաստատուեցան պաշտօնատեղեր կայանք և խանութք, գործաւորաց համար ալ բնակութեան տախտակամած շէնքեր: Առատ ջուր ալ ունին որ 1800 մեդր երկայն ջրմղով կու գայ լեռան ետևի լճէն. ինչպէս նաև խմելու ջրոյ երկու արքրերն, որ օրը երկու անգամ կը բաշտին ջրմղներով, և ջրհորներով: — Բաց ի վերջոյիշեալ նաւահանգստէն, ամբարտակէն և հարթադատակ ընդարձակ հողակոյտէն և թուաբերէն, մասնաւոր ամբերկեան ընկերութիւն մը վրան առած է մինչև ի կաթուն ջրանցը բանալուն

աշխատութեան գործը: Այլն բան կարգի դրուած է. շինութեան նիւթոց համար յարկածածուկ տեղուանք, շոգեշարժ գործիք, և 80 անկողնով հիւանդանոց մ'ալ: Մեծագործ մեքենաներ կան, յորս Լէսաէփա կոչուածն՝ 3800 խորանարդ մեդր կրնայ փորել 10 Ժամուան մէջ: Աշխատութեանց սկսելով՝ Քոլոնի նաւահանգիստն 75 աւ 100 շահեցաւ: Հիմայ 2000էն աւելի գործաւոր կ'աշխատին հոն, և ամէն ամիս միլիոն հարուով 70 նաւ կու գան հոն, աւագատարրք, բեռնաւոր նաւեր, և այլն, որք ընդ ամէնը 800000 տակառաւափ բեռ կը բերեն, որով քնակաց թիւն երկու հազարէն տասն հազարի ելաւ, և օրէ օր կը բազմանայ, որով 1880ին աննշան քաղաք՝ քիչ ատենէն ծաղկած քաղաք մը պիտի դառնայ:

Կաթունի կողմն ալ տներ, գործաւորաց բնակարանք, շտեմարանք և պանդոկք շինուեցան, գործատուներ՝ երկաթուղիներ, կառքեր և տղմաշահ գործիներ շինուելու համար, և որոնք արդէն Եակըր գետոյն մէջ ի գործածութեան են: Ճախմախուտ հող մ'է, կաւային և նորաւ կազմ խաւերով:

Պոնիոյ Սլոտատոյի աշխատութեանց բաժնին մէջ ինչուան հիմայ շինուած են հողակոյտ մը գետին երկու կողմը՝ կամրջով մը իրարու հետ միացած: Եակըր գետոյն մաս ալ արդէն կրտուած է, և գետոյն ձախ կողմը տներ և բնակութիւնք, գործարանք, պանդոկք և ձուլարան մը մետաղաց, 350 մեգր երկաթուղի, և 1400,000 խորանարդ մեդր հող արդէն փորուած է, ի կաթունէն մինչև ի Պուսնա-Վիսոյա (Բարեւտիւ) և կատարածն գործադրութիւնն Արթիկ և Սոնդրէկէր վրանին առած են:

Թապէրնիլոյի և Սուրբ Պօղոսի աշխատութեան բաժնին մէջ բնակութիւնք, գործարանք և պաշտատնարան և պանդոկք արդէն շինուած և պարտատն են, 360 մեդր երկաթուղի, և Եակըր գետին ալ կողմի մասը կտրելու համար ամէն կարելոյ: — Ի Սուրբ Պօղոս բացուելու ճամբան արդէն սկսուած և առաջ տարուած էր 25 հազարամեդր երկայնութեամբ, որ և միւս գծերէն շատ աւելի դժուարին է: Հոն ալ ինչպէս Ուլիսիոյ, Էմբէրատորի, Քուէւպրայի, Մեծն Ռիոյի և Փարսիլոյի կողմերը հողոյն պատճառաւ և մակերևութին անհարթութեան համար աշխատութիւն կը դժուարանայ՝ 20էն մինչև 100 մեգր փորել հարկ ըլլալով: Տէւթիլ և Պոյար գաղնադրութիւն մը ստորագրեցին՝ վրանին առնելով միլիոն մը խորանարդ մեդր փորելու պարտաւորութիւնը. և հիմայ այս աշխատութիւնն մեծ արագութեամբ յառաջ կ'երթայ:

Կորկոնայի կողմն ալ նոյնպէս նշանաւորներն մէկն է: Այս բաժնին մէջ, յորում կը պաւազգրին Մամէյ, Մազաքին և Սանթաքուզ,

շինուած և 'ի կարգի են ամէն կարեւորք, պաշտօնարանք, բնակութիւնք, գործատունք, չողգեւարժ գործեաց և ածխոյ մթերք, հող տեղափոխելու հարիւրաւոր կառքեր: Փէրաղփիէ ընկերութիւնն 1200,000 խորանարդ մեզր փորելու դաշնագրի մը ստորագրութիւն տուած է, և արդէն ամիսը 13էն մինչև 15 հազարամէզր կը փորէ: Բաւական յաղորդութեամբ կը յաւանան նաև 'ի Մաշաքին աշխատութիւնք՝ Շախրը գետոյն վրայ կամուրջ մը ձգելու և միլիոն ու կէս խորանարդ մեզր հող փորելու, զոր մասնաւոր դաշնագրով մը իր վրան առած է ընկերութիւնն: Իսկ 'ի Սանթաքրուզ ինչուան հիմայ 'ի զլուխ հանուած աշխատութիւնք եղած են առ. « Ի չնդ մակարդակք՝ դիւրացընելու համար նկիթոց գետոյն միւս կողմը փոխադրութիւնը:

Ուպիսփոյի, Էմբէրատօրի, Քուլէպրայ կողմանքն կարեւորագոյն և գլխաւոր բաժինք են, ուր նաև կարեւոր շինութիւնք լինցած են: Ուպիսփոյի ձորին վերին կողմերը լեռնոտ և աւհասաւն ըլլալով՝ մեծ աշխատութեամբ և սրաւ զօրութեամբ ետեւէ են Քօրօզդոյ իրանցից գծին վրայ գտնուած բլուրները հարթելու: Այս քաժնին զիտաւոր աշխատութիւնքն այլ և այլ մասնաւոր ընկերութիւնք վրանին առած են. ինչպէս Պօնա եղբարք 500000 խորանարդ մեզր հող պիտի փորեն: Մուրանիօի կողուած ընկերութիւնն ալ երկու միլիոն խորանարդ մեզր՝ ամիսը 25 մղոն փորելով, և հիմայ Ուպիսփոյ գետոյն լոց ընթացքը փոխելու ետեւէ են:

Ուրպէս զի Եպլըր գետը չըլլայ թէ իւր այժմ իրանցք դարձած՝ նախկին անկողինը կոխէ, Մաշաքի մը և Ուպիսփոյի մէջ 500 մեզր հաստութեամբ պատնէշ մը շինել մտածեցին, որ Սանդաքրուզին և Ուպիսփոյի բլրոց մէջ 70 մեզր բարձր անցքը պիտի արպելու, և գետոյն ընթացքը փոխելով՝ աւազանին մէջ պիտի թափել տայ գայն, ուր լիճ մը պիտի ձևազընէ 50 միլիոն խորանարդ մեզր լոց:

Սակայն այն մեծ պատնէշը շինեն, որ Քուլէպրայի 100 մեզրէն տակի բարձր բլուրը պիտի կորէ, ամենամեծ ձեռնարկ մ'է, և զբխաւոր դժուարութիւնն ամբարտակը շինելուն վրայ չէ, այլ անձրեակայն եղանակաց մէջ լոց առատութեան գէժ պատերազմելն, և այս միայն՝ բոլորնդակ աշխատութեան երկու երրորդ մասն է: Այս կէտէս անցնելով՝ Մեծն Ռիդի գետին հետ կը խառնուի իրանցքը, զոր փորելով պիտի կանոնաւորեն:

Հագիւ թէ յէմբէրատօր կարեւոր շինուածոց աշխատութիւնք լինցան, մէկէն ձեռք զարկին Էմբէրատօր, Լափիդա և Լազէպաբա լեռները հարթելու դաշտացընելու հսկայական աշխատանքին: Ջրանցքը փորելու համար մեծապէս օգտակար կ'ըլլայ Քամաքոյ գետոյն լուրն. և

հոս 2000 գործաւորք կան, 8 չողգեւարժ մեքենայք, 12 տղմահան գործիներ, հարիւրէն աւելի տեղափոխութեան կառքեր՝ երկաթուղոյ շինութեան համար պէտք եղած նկիթերը փոխադրելու, որ պիտի բռնէ գրեթէ ութ հազարամէզր երկայնութիւն ունեցող տարածութիւն մը: Հոռերու Փանտօփինի՝ որ 1883ին գեկտեմբերի մէջ հոն գտնուելով՝ վիդոր ֆիզական խոսակցական նաւուն մէջ, Էմբէրատօրի բաժնին մէջ տեսած աշխատութեանց ստորագրութիւնն հրատարակեց մասնաւոր պորուածքով մը, « Գեղեցկատեսիլ են, կ'ըսէ, այս կողմանք, բուսաբեր բլուրներով չըլլապատած. և թէ որ վատաւորը կ'ըմբայ չունենար՝ երկրաւոր դրախտ կըրնար համարուիլ »: — Գլխաւորին և պաշտօնաւոր տեսարց բնակութիւնքն բլրոց վրայ ըլլալով՝ թէ շինուելու վրայ եղող իրանցքը կը տեսնեն և թէ կատարուած աշխատութիւնները: Գլխաւոր տեսուչ՝ քանի մը խցով անակ մ'ունի, գեղեցիկ և մշակուած պարտէզ մ'ալ, ուր կը ծիլն կը ծաղկին և կ'ուռհանան վանիկա, պանան, ամենազգի արմատենիք, բերդնիա, և այլն: Բլրոյն զագաթը մեծ տուն մը կայ, յորում միայն Իտալացիք կը բնակին, և որոց յանձնուած են այս մասին մէջ աշխատութիւնք. սակէ զատ տուն մ'ալ պաշտօնաւորանի և հեռագրի համար: Այս բնակութիւններէն հեռու՝ բլրան միւս կողմը հիւսնդանոց մը կայ, կան ջրմուղներով բաղանիք և ուրիշ ամէն դիւրութիւն, ինչուան ստանաւուն ալ. իսկ լուրն վատաւորը է, և այս պատճառաւ ջրածխատ լուր բերելու հոս ընկերութիւնն 'ի Գաւգիոյ, լիտրը 60 հարիւրէր մի ձևաւորելով. Պորտոյն ալ զինի՝ չիւր մէկ ու կէս ֆրանքի: Բլրան վրայ տաքը այնչափ սաստիկ չէ, վասն զի միշտ հողմ կայ, իսկ ստորոտը՝ ուր կը փորուի, խղճուկ օդոյն պատճառաւ գործաւորաց կեանքն շատ դժուարին է, թէ՛ օդոյն, թէ՛ աշխատութեան և և թէ՛ կերակրոց նկատմամբ, մանաւանդ Էբրու պացոց համար: Քանի մը տարի այս տեղերս բնական անտառք էին չորքտանեաց և Թաշնոց բնակավայրք և պատասանարանք, իսկ հիմայ 2000ի չափ բնակիչ կայ:

Քուլէպրայի մասին աշխատութիւնն ալ՝ ոչ միայն իր բարձր դրից համար տարժանական է, այլ վասն զի հողն կաւային է և խառն տրուքիդակցով ժայռերով, որք ձևացած են հրային ժայռից րոժմամբ: Աշխատութիւնք հոն արաւգաբար կը յառաջանան, և կը գործեն 16 փորոց և 10 մեքենայարժ գործիք և 300 կառք: Մեղէ ընկերութիւնն 26 ամաց մէջ 3500,000 խորանարդ մեզր փորելու դաշնագրի մը ստորագրած է: — Ուրիշ ընկերութիւն մ'ալ Մեծն Ռիդի մասը վրան առած է, 130000 խորանարդ մեզր հող փորելու. գետն ալ պիտի կտրէ, և լոց ամբարանոց մը շինէ. և այս աշխատութիւն

քըն արդէն լմննալու վրայ են: — Փարսիյի գողի մասն ալ հինգ այլ և այլ կետերու բաժնուած է, զորս փորկու գործն մինչև ց(Մեծն Ռիոյի բերանը՝ Գաղղիական — Սլերիկեան ընկերութիւն մը յանձն առաւ:

Բանամայի մասին աշխատութիւնն մեծապէս է քան զայլոյ. Բանամա՝ որ իր ձկնաբեր ծովուն անուամբ կոչուած է, մեծ ու փառաւոր ապագայ մը պիտի ունենայ: Վլամ դի կեդրոնական Սլերիկայի գլխաւոր քաղաքներէն մէկն ըլլալու սահմանուած է, և ծովական վաճառականութեան կեդրոն: Քաղքին ստորին և վերին մասին մէջ արդէն 25000էն աւելի բնակիչ կայ. լաւ կերպով պատասխարած է, փայտաշէն և յարգածածուկ աներ ունի, երկու կամ երեք դստիկոնով, և ընդհանրապէս նեղ են փողոցներն. բացց հիմայ փառաւոր տըներ և խանութներ, վաճառատեղիք, և այլն, կը շինուին: Զրանցից ընկերութիւնն միւրին Ֆրանսիոյ ընդարձակ չէք մը գնեց, և հոն իր կեդրոնական մատակարարութիւնը հաստատեց. 275 հողոյ բաւական հիւանդանոց մ'ունի, 24 սրահներով. կան նաև հիւանդները խնամելու համար հաստատու կուսանաց և քանակաւոր առանձին բնակութեան խուցեր, ինչպէս նաև առատ ջուր:

Բաց 'ի Քոլոնի հիւանդանոցէն, զոր վերը յիշեցինք, միւս ամէն կեդրոնատեղիք աշխատութեանց՝ իրենց յատուկ հիւանդանոց և դեղատուն ունին. իսկ Թապակայ կղզւոյն մէջ կիսառողջից համար մասնաւոր չէք մը հաստատուած է:

Բանամայի չրկակայքը եղած կղզիք երկու գլխաւոր խումբ կրնան բաժնուիլ. առաջինն Մարգարտաց, որ շատ մը կղզիներէ կը կազմուի գրեթէ 60 մղոն Բանամայէն հեռու, և բնակիչքն մարդրտի շահաւոր որսորդութիւնն ալ կ'ընեն. իսկ միւս խումբն Բանամայի մօտ է, և Թապակա, Թապակիլա, ճլամենդա կղզեաց անուամբ կը կոչուի, և կը ծառայէ մեծամեծ նաւերու, որք հոն խորխուր կը ձգեն, և դէպ 'ի Բերու, Միլին Ամերիկա և Ս. Փրանս կիսուս ճանապարհորդող Շոգեհաւաւա — Ընկերութեան ձեռքն է:

Բանամայի նաւահանգիստն աշխարհիս գեղեցիկագոնից մին է, թէ և շատ ոնդամ հիւսիսայինն ճանաչիկ հողմանք հոն կը շնչեն: Մակընթացութեան և տեղատեղեան պատճառաւ, որ մինչև վերջուկէս մեզր կ'ըլլայ երբեմն, մեծ

նաւեր կը ստիպուին Փէրիքոյ և ճլամենդա կղզեաց մօտ խորխուր ձգելու, քաղաքէն դուրս թէ վեց հազարամեզր հեռու: Հիմայ Մեծն Ռիոյ դետին բերանը խանամայի ընդարձակ նաւահանգիստ պիտի չլինուի, որ 550 մեզր լայնուած թիւն և հինգ հազարամեզր երկայնութիւն պիտի ունենայ, պատասխարութեան սոմբարտակներով, շտեմարաններով, նաւարանով և նաւարկութեան պէտք եղածով. և երբ ջրանցից չէք բաւական յառաջ երթայ և մինչև 'ի վերջի եղալ կղզիս հասնի և աշխատութիւնք լըմննալու վրայ ըլլան, նաւահանգստին մէջ 80 մեծ նաւեր պիտի կտրենան մի և նոյն ժամա նալ մտնել:

Այլ ինչպէս վերը ըսինք՝ սաստիկ մակընթացութեան պատճառաւ՝ Խաղաղականին երեսը մեծ տարբերութիւն կը կրէ մինչև 6 մեզր ջուրը բարձրանալով. մինչդեռ Սլանդեան Ովկիանոսին մէջ հողու 60 հարիւրամեզր. որով այս ծովաց մակերևութին անհասարարութենէն ջրոյ սաստիկ ընթացք մը կը ձևանայ ջրանցից մէջ, և նաւարկութիւնն դժուարին և վտանգաւոր կ'ըլլայ, և ջրանցից եղերքն ալ կ'աւերին, ուստի այս անպատեհութեան դէմ առնելու համար՝ առաջարկուեցաւ Բանամայի կողմէն չորս դիէն գոց ջրի նաւաբարան մը շինել երկդունեայ, և որ երեք մասն բաժնուած ըլլայ. մին նաւերու մօտց ու միւսն ելից, երրորդն ալ՝ միւս երկուքին վրաս կամ աւերմունք կրած ատեն՝ անոնց տեղ ծառայելու: Այս կերպով տեղատեղեան ժամանակ ալ ջուրն միշտ ինն մեզր բարձրութիւն պիտի ունենայ հոն. և նաւ մը թէ որ ջրոյ բարձրանալուն ժամանակ հասնի՝ կրնայ նաւահանգստին մօտենալ բաժանմանց միոյն ջուրը նաւահանգստին հետ հաղորդելով, որով ջրոյ մակերևոյթն հաստատ կ'ըլլայ. այն ատեն նաւը դիւրաւ աւազանին մէջ կը մտնէ, որուն դռներն մէկէն կը գոցուին, և նաւ իր ճամբան ապահով առաջ կը տանի: Քեպէտ կան արուեստագէտ անձինք՝ որ այս առաջարկութեան դէմ են, վասն զի կ'ըսեն թէ ջրոյ մակերևութին տարբերութենէն առաջ եկող ընթացքն ոչ դժուարացուցիչ և ոչ ալ վտանգաւոր է նաւարկութեան, թէ որ ջրանցից գրուէն մինչև 3 մեզր հակումն տրուի՝ Քոլոնէն մինչև 'ի Բանամա, սակայն այս գործը աւելի բազմաժախ կը գտնեն քան զվերինն՝ առաջին առաջարկութեան կուսակիցը, որով և այս վերջին առաջարկն անընդունելի կը թուի:

Շարունակելի:

